


ԿԱՄՈՒՐՁ

ԴԷՊԻ

ԿԵԱՆՔ



Սուրբ Գիրքը կը սորվեցնէ թէ Աստուած կը սիրէ ամէն մարդ եւ կ'ուզէ որ զինք նանչնանք քանի որ մարդը ստեղծուած է որ ունենայ իր անձնական յարաբերութիւնը իր ստեղծիչին հետ:

Բայց մարդը Աստուծմէ եւ Անոր սէրէն բաժնուած է:

Աստուած մէկ կողմն է եւ մարդիկ միւս կողմը:

1/ Ինչո՞ւ համար մարդը բաժնուած է Աստուծմէ եւ իր սէրէն:

Որովհետեւ մարդը մեղանչեց Աստուծոյ դէմ:

«Ձեր ու ձեր Աստուծոյ մէջտեղ բաժանում ձգողը ձեր անօրէնութիւնները եղան»:

(Եսայի 59.2)

«Վասնզի ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակասած են»

(Հոովմ. 3.23)

2/ Այս բաժանումը դէպի ո՞ւր կը տանի արդեօք:

Այս բաժանումը միմիայն մահուան եւ անխուսափելի դատաստանի կ'առաջնորդէ.

«Քանզի մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան:

(Եբրա. 9.27)

«Բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ զԱստուած չեն նանչնար, եւ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր. որոնք պիտի պատժուին յաւիտեանական սատակումով՝ Տիրոջը երեսէն ու Անոր զօրութեանը փառքէն»:

Բ. Թեապ. 1.8-9

3/ Բայց լուծում մը կայ:

Յիսուս Քրիստոս, որ մեր մեղքերուն համար մեռաւ խաչին վրայ, համբան է Աստուծոյ:

Յիսուս ըսաւ : «Ես եմ համբան, ճշմարտութիւնը եւ կեանքը : Մէկը Հօրը
քով չգար եթէ ոչ ինձմով»:

(Հովհաննու 14.6)

«Քանզի մէկ Աստուած կայ, ու մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց
մէջտեղ, Քրիստոս Յիսուս մարդը, որ իր անձը ամէնուն տեղ փրկանք
տուաւ».

(Ա. Տիմոթ 2.5-6)

«Վասնզի Քրիստոս ալ մեղքի համար մէկ անգամ չարչարուեցաւ,
Արդարը անարդարներուն համար, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ»:

(Ա. Պետրոս 3.18)

4/ Արդեօք ով որ այս բաները գիտնայ փրկութեան կամուրջէն պիտի կարենա՞յ անցնիլ:

Ո՛չ, բայց միայն անոնք որոնք անձնապէս Յիսուս Քրիստոսը կ'ընդունին
իրենց կեանքերուն մէջ, եւ Անոր կը վստահին իրենց մեղքերուն
թողութեանը համար: Անոնց համար կարելի է այս կամուրջը անցնիլ :

«Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ
Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը»:

(Յովհաննու 1.12)

Յիսուս ըսաւ, «Ահա ես դուռը կայներ եմ ու կը գարնեմ. եթէ մէկը իմ
ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ, եւ անոր հետ ընթրիք
պիտի ընեմ, ան ալ ինձի հետ»:

(Յայտնութիւն 3.20)

5/ Ինչպէ՞ս մէկը կ'ընդունի Յիսուս Քրիստոսը.

ԱՄԷՆ ԱՆՀԱՏ ԱՆՁՆԱՊԷՍ ՊԷՏՔ Է ՈՐՈՇԷ՝
ՔՐԻՍՏՈՍԸ ՊԷՏԻ ԸՆԴՈՒՆԻԹ՞ ԹԷ ՈՉ

Յիսուսի յանձնուիլը պարզապէս քայլ մըն է որ աղօթքով կ'արտայայտուի:

Հետեւաբար, եթէ կ'ուզես նոր կեանք մը սկսիլ Յիսուսի հետ, բոլոր անցեալդ մէկ կողմ դնելով, անկեղծաբար աղօթէ եւ հետեւեալ կերպով իրմէ խնդրէ.

*«Տէր Յիսուս, անկեղծութեամբ եւ խոնարհութեամբ կ'ուզեմ քեզ հրաւիրել իմ կեանքիս մէջ. եկուր եւ եղիր իմ Փրկիչս եւ Տէրս, իմ հոգեկան աչքերս բաց որ աւելի քեզ նանչնամ.
Կը խնդրեմ որ ներես բոլոր իմ անցեալ մեղքերս եւ ինձի տաս յաւիտենական կեանքի պարգեւը»:*

Այն վայրկեանին որ հաւատքով քու կեանքդ Յիսուսի կը յանձնես, շատ բաներ կը պատահին .

- Յիսուս Քրիստոս կը մտնէ քու կեանքիդ մէջ իր հոգիով, եւ քեզ յաւիտեան չի թողուր,
- քու մեղքերդ ամբողջովին կը մաքրուին,
- դուն ալ Աստուծոյ որդի ես,
- ալ կը սկսիս նոր եւ յաւիտենական կեանքը որ արդէն Աստուած պատրաստած էր քեզի համար:

Աստուածաշունչը հաւատացեալին հոգեկան սնունդն է. Հետեւաբար, զանց մի ընենք զայն կարդալու եւ թոյլ տուր որ Տէրը քեզ օրէ օր փոխէ մինչեւ որ հասնիս Յիսուս Քրիստոսի կատարեալ պատկերին:

Յաւելեալ տեղեկութեանց համար դիմել՝ hisous@hotmail.fr
